



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

N

Սիրելի՛ շրջանավարտներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ՝ աճող սերնդի հոգևոր կերպարի ձևավորման առումով, թերևս, ամենաարժեքավոր դասի՝ « Վերջին գանգ >> -ի կապակցությամբ:

Ուսումնառության տարիների ամփոփիչ գանգի անգուզական դողանքները միաժամանակ ավետում են ձեր հասունության կայացման սկիզբը: Նոր կյանքի շեմին մաղթում եմ ձեզ հաստատականություն, անսպառ եռանդ և նպատակասլացություն: Թո՛ղ իրականություն դառնան ձեր բոլոր իդեերն ու նվիրական երազանքները: Երբեք հուսախաբ չանեք ձեր սիրելի ծնողներին:

Շնորհավորում եմ նաև ձեզ՝ հարգարժա՛ն մանկավարժներ, քանզի այսօրվա արարողությունը ոչ միայն հրաժեշտի տոն է, այլև կրթության գործում ունեցած ձեր անմնացորդ նվիրումի և անխոնջ վաստակի հանդեպ երախտագիտության վկայություն:

Թանկագի՛ն շրջանավարտներ,

Դուք ինքնուրույն կյանքի շեմին եք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր երկիրը փորձում է դիմակայել բազում մարտահրավերներ և իր արժանապատիվ տեղը գրավել քաղաքակիրթ հասարակությունների ընտանիքում: Համոզված եմ, որ ձեր սերունդը լուրջ ներդրում կունենա մեր ազգի ու պետության գալիք հաղթանակների կերտմանը միտված այդ կարևոր գործընթացներում:

Հույժ արժևորելով կայուն գիտելիքներով և վեհ գաղափարներով օժտված սերնդի դերը բարեկեցիկ հասարակության կերտման գործում՝ մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ և մաղթում բարի երթ :

Հարգանքներով՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ